

Մարզպետարանն ղիմած քաղաքացիների ղիմումների.

բողոքների 2014թ.-ի առաջին կիսամյակի ամփոփագիր

2014թ-ի առաջին կիսամյակում ստացվել է 530 ղիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 373 քաղաքացի: Դրական պատասխան է ստացել 363-ը, մերժվել՝ 3-ը, ընթացքի մեջ է 7 ղիմում: /Դրամական օգնության ղիմումները մերժվել են հիմնականում կրկնակի լինելու կամ ընթացիկ եռամսյակում օգնություն ստացած լինելու հիմքով/:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով ղիմել է 32 քաղաքացի, որից 19-ի խնդրանքը բավարարվել է, 12-ինը՝ մերժվել, 1 ղիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի ղիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 60 ղիմումից դրական պատասխան է ստացել 52-ը, մերժվել է՝ 5-ը, 3 ղիմում ընթացքի մեջ է: /Առողջապահական հարցերով ղիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով/:

դ/ Աշխատանքի հարցերով ղիմած 14 քաղաքացիներից 7-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 7 ղիմում մերժվել է, /ղիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով ղիմած 7 քաղաքացիներից 6-ը ստացել են դրական պատասխան, 1 ղիմում ընթացքի մեջ է:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով ղիմել է 15 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով ղիմած 13 քաղաքացիներից 12-ը ստացել են դրական պատասխան, 1 ղիմում ընթացքի մեջ է:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով ղիմել են 15 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Այլ բնույթի 1 ղիմում է հաշվառման վերցված, որին տրվել է դրական պատասխան:

ժ/ Մեփականաշնորհման բնույթի ղիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է ղիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ